ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/16397-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Տարածական տվյալների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1286-17.03.2026-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը՝ լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ գործող օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 9-րդ կետում կիրառվում են ինչպես «վարչական և այլ ակտեր», այնպես էլ «վարչական ակտերն» ձևակերպումները: Իրավական անորոշություն չառաջացնելու, կարգավորման առարկայի շրջանակը հստակ սահմանելու և հետագա տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք «վարչական ակտերն» բառերը փոխարինել «այդ ակտերն» բառերով, քանի որ տվյալ ձևակերպումը կապահովի հղման հստակությունը՝ ընդգրկելով նույն կետում նախապես նշված «վարչական և այլ ակտերը»:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ